

ՀՈՒՆՎԱՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





| | |
|---|-----------|
| 1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ | 4 |
| 1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում | 5 |
| 1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում | 5 |
| 1.3. Ջրահեռացման համակարգ | 6 |
| 1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում | 7 |
| 1.5. Էներգահամակարգ | 7 |
| 1.6. Մեքենա-մեխանիզմներ | 8 |
| | |
| 2. Առևտրային տնօրինություն | 9 |
| 2.1. Բաժանորդների տվյալներ | 10 |
| 2.2. Հասույթ | 10 |
| 2.3. Գանձում | 11 |
| 2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ | 12 |
| 2.5. Ջրաչափեր | 13 |
| 2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում | 14 |
| | |
| 3. Տեխնիկական տնօրինություն | 15 |
| 3.1. Ջրամատակարարման շարունակականություն | 16 |
| 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում | 19 |
| 3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ | 17 |
| 3.4. Ջրատար համակարգի բարելավում | 19 |
| 3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն | 23 |
| 3.6. 1-85 թեժ գիծ | 24 |
| | |
| 4. Լրատվական ծառայություն | 25 |
| | |
| 5. Որակի, առողջության և անվտանգության բաժին | 28 |
| 5.1. Փաստաթղթերի մշակում | 29 |
| 5.2. Դասընթացներ/սեմինարներ | 29 |
| 5.3. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում | 30 |
| | |
| 6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ | 32 |
| 6.1. Ինտերակտիվ համակարգ | 33 |

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հունվար ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| Կատարված աշխատանքներ | Չափման միավոր | Քանակ |
|--|----------------------|--------------|
| Չափում հոսքաչափով | տեղ | 1525 |
| Որոնում խողովակափնտրիչ սարքով | մ | 62673 |
| Հոսակորուստի որոնում ակվաֆոնով | մ | 42527 |
| Հոսակորուստի որոնում կորեյատորով | մ | 13390 |
| Ջրաչափական հանգույնների ու սուժասափրություն, սխեմաների կազմում | հատ | 59 |
| Շահագործումից հանված ջրագիծ | մ | 740.0 |
| Կառուցված ջրագիծ | մ | 1930.5 |
| Կառուցված կոյուղագիծ | մ | 150.0 |
| Վերացված գաղտնի վթարներ | հատ | 21 |
| Փոխարինված փական | հատ | 48 |
| Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց | հատ | 320 |
| Մաքրված դիտահոր | հատ | 602 |
| Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ | լ/վ | 25.4 |
| <i>Վերացված վթարներ</i> | <i>Չափման միավոր</i> | <i>Քանակ</i> |
| Ջրամատակարարման ցանցում | հատ | 804 |
| Ջրահեռացման ցանցում | հատ | 2089 |
| Պոմպակայաններում | հատ | 0 |
| Մաքրված անձրևընդունիչ | հատ | 0 |

Հունվար ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

| | Պոլիէթիլենային խողովակներ (հատ) | Մետաղական խողովակներ (հատ) | Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ |
|----------|---------------------------------|----------------------------|---|
| Ընդամենը | 491 | 782 | 419 |

1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունվար ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

| Կատարված աշխատանքներ | Ջրաչափի տրամաչափ, մմ | | | | | | | | | Ընդամենը |
|----------------------|----------------------|----|----|----|----|----|----|----|-----|----------|
| | 15 | 20 | 25 | 32 | 40 | 50 | 65 | 80 | 100 | |
| Տեղադրված | 83 | 3 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 87 |
| Փոխարինված | 217 | 50 | 5 | 0 | 0 | 3 | 0 | 0 | 0 | 275 |
| Տեղափոխված | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տեխ. ակտ | 139 | 14 | 2 | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 | 159 |
| Ընդամենը | 439 | 67 | 7 | 1 | 1 | 5 | 1 | 0 | 0 | 521 |

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 521 ջրաչափ: Կատարված աշխատանքների 84 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունվար ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Տեղամասի անվանումը | Կոյուղագծերի լվացում | Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ | Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ |
|-----|--------------------|----------------------|--|---|
| 1 | Արաբկիր | 1110 | 250 | 0 |
| 2 | Սաշոոց | 1140 | 190 | 0 |
| 3 | Շահումյան | 815 | 158 | 48 |
| 4 | Զեյթուն | 640 | 252 | 0 |
| 5 | Շիրակ | 110 | 383 | 0 |
| 6 | Արթիկ | 0 | 63 | 0 |
| 7 | Ապարան | 0 | 27 | 0 |
| 8 | Ալավերդի | 1820 | 20 | 6 |
| 9 | Աշոցք | 60 | 4 | 12 |
| 10 | Բերդ | 0 | 10 | 6 |
| 11 | Իջևան | 270 | 41 | 0 |
| 12 | Լոռի | 2940 | 170 | 0 |
| 13 | Նոյեմբերյան | 0 | 17 | 0 |
| 14 | Սպիտակ | 150 | 12 | 0 |
| 15 | Ստեփանավան | 720 | 26 | 47 |
| 16 | Թալին | 0 | 11 | 0 |
| 17 | Տաշիր | 90 | 3 | 0 |
| 18 | Չարենցավան | 700 | 96 | 0 |
| 19 | Աբովյան | 1860 | 62 | 0 |
| 20 | Հրազդան | 1500 | 95 | 0 |
| 21 | Կենտրոն | 500 | 246 | 0 |
| 22 | Հյուսիս | 50 | 242 | 0 |
| 23 | Հարավ | 0 | 370 | 0 |
| 24 | Էրեբունի | 0 | 182 | 0 |
| 25 | Արմավիր | 0 | 129 | 0 |
| 26 | Էջմիածին | 0 | 105 | 0 |
| 27 | Աշտարակ | 0 | 36 | 0 |
| 28 | Արտաշատ | 0 | 116 | 0 |
| 29 | Արարատ | 0 | 102 | 2 |
| 30 | Մասիս | 0 | 72 | 16 |
| 31 | Գավառ | 180 | 26 | 0 |
| 32 | Սևան | 150 | 61 | 0 |
| 33 | Մարտունի | 0 | 18 | 0 |
| 34 | Վարդենիս | 0 | 13 | 0 |
| 35 | Ճամբարակ | 0 | 18 | 0 |
| 36 | Դիլիջան | 0 | 32 | 12 |
| 37 | Վայք | 0 | 16 | 0 |
| 38 | Եղեգնաձոր | 90 | 7 | 0 |
| 39 | Ջերմուկ | 0 | 32 | 0 |
| 40 | Սիսիան | 340 | 29 | 0 |
| 41 | Գորիս | 0 | 32 | 0 |
| 42 | Կապան | 0 | 75 | 12 |
| 43 | Մեղրի | 0 | 25 | 6 |
| | Ընդամենը | 15235 | 3874 | 167 |

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանի արտադրողականությունն ընկել էր, որի պատճառով պոմպերը դուրս բերվեցին և մաքրվեցին բանվորական անիֆները, որոնք ամբողջությամբ փաթաթված էին աղբով: Ապամոնտաժվեցին և մաքրվեցին նաև հակադարձ փականները, որոնք նույնպես խցանվել էին:

- Ջերմուկի կեղտաջրերի մաքրման կայանում կարգաբերվեցին մանր ճաղավանդակի քերիչ սանրերը, որոնք աշխատանքի ընթացքում խախտվել էին և չէին մաքրում ճաղավանդակի վրա հավաքված աղբը: Փոխարինվեցին նաև օդամուղների ֆիլտրերը, որոնք ամբողջությամբ խցանվել էին: Արտաքին լուսավորության համակարգը նույնպես խաբանվել էր, որի արդյունքում լույսերը երեկոյան ժամերին ավտոմատ չէին միանում, որը նույնպես վերանորոգվեց:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի պոմպի բանվորական անիվը խցանվել էր և ջուր չէր մղում: Արդյունքում պոմպը դուրս բերվեց հորից և մաքրվեց: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ևս մաքրվեցին:

- Դիլիջանի և Մարտունու կեղտաջրերի մաքրման կայաններում փոխարինվեցին օդամուղների օդի ֆիլտրերը, որոնք խցանվել էին: Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Գտնվելու վայրը | Կառույցի անվանումը | Մղված կեղտաջրերի ծավալը մ ³ | Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³ | Կեղտաջրից առանձնացած կեղտ տ |
|-----|----------------|--------------------|---|---|--------------------------------|
| 1 | ք. Գավառ | «Գավառ» ԿՄԿ | 0 | 65,489 | 18 |
| 2 | ք. Մարտունի | «Մարտունի» ԿՄԿ | 0 | 60,259 | 23,4 |
| 3 | ք. Վարդենիս | «Վարդենիս» ԿՄԿ | 0 | 173,969 | 5,4 |
| 4 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» ԿՄԿ | 0 | 68,774 | 5,4 |
| 5 | ք. Դիլիջան | «Դիլիջան» ԿՄԿ | 0 | 125,956 | 9,9 |
| 6 | ք. Սևան | «Սևանի» N3 պ/կ | 13,115 | 0 | 0 |
| 7 | ք. Սևան | «Սևանի» N5 պ/կ | 8,623 | 0 | 0 |
| 8 | ք. Գավառ | «Գավառ» պ/կ | 9,900 | 0 | 0 |
| 9 | ք. Վարդենիս | «Վարդենիս» պ/կ | 29,200 | 0 | 0 |
| 10 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» պ/կ | 0 | 0 | 0 |

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

| Աշխատանքների նկարագիրը | Քանակ |
|---|-------|
| Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում | 100 |
| Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում | 12 |
| Այց | 2 |
| Պոմպի ապամոնտաժում | 1 |
| Պոմպի տեղադրում | 1 |

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունվար ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունվար ամսվա ընթացքում նորոգվել է թվով 2 մեքենայի շարժիչ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:



Թվով 2 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիֆտեր, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 47 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

Թվով 8 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 7 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:


Վերանորոգվել են թվով 5 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուռի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Թվով 5 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 2 մեքենայի վրա իրականացվել են գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Վերոհիշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարների ժամանակին վերացմանը:



ԱՌԵՎՏՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.02.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 570,432 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | 2022թ. հունվար ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ | Կնքված պայմանագրերի քանակը | % |
|---------------|------------------|--|----------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 669,967 | 545,059 | 81,4 |
| | Իրավաբանական անձ | 30,276 | 25,373 | 83,8 |

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բաժանորդների ընդհանուր քանակ | Ծախսող բաժանորդների քանակ | % |
|---------------|------------------|------------------------------|---------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 732,409 | 573,270 | 78,3 |
| | Իրավաբանական անձ | 35,587 | 24,905 | 70,0 |

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 690 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունվար ամսվա ընթացքում ստուգաչափվել է 1980 ջրաչափ:

| Տնօրինություն | Սպառողներ | Մարքին | Անսարք | Միջամտած | Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 01.2022 |
|---------------|------------------|--------|--------|----------|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 943 | 785 | 142 | 1870 |
| | Իրավաբանական անձ | 40 | 60 | 10 | 110 |
| | Ընդամենը | 983 | 845 | 152 | 1980 |

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ հունվար ամսին փոխարինված 1980 ջրաչափերի մոտ 50%-ը (կամ 997 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 176,222 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Փանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունվար ամսին գանձումը կազմել է 1,689 մլն դրամ (91 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հուվար ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրաովող մեթոդներից (բացառությամբ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դաղարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դաղարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Հունվար ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 378 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 38,4 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

| Տնօրինություն | Պարտքը 01.02.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ) | Այդ թվում նոյեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ) |
|----------------------|--|---|
| Առևտրային, այդ թվում | 8,596 | 2,100 |
| Բնակիչ-բաժանորդներ | 6,300 | 1,402 |
| Իրավաբանական անձեր | 2,296 | 698 |

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 304.8 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.01.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բնակիչ-բաժանորդներ | | | Իրավաբանական | | |
|---------------|---------------|--------------------|------------------|-------|--------------|------------------|-------|
| | | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % |
| Առևտրային | Ջրաչափով | 701,466 | 571,719 | 81.50 | 34,833 | 24,897 | 72.48 |
| | Առանց ջրաչափի | 30,943 | 1,551 | 5.01 | 754 | 8 | 1.06 |

Տվյալների բազայում 01.01.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

| Տնօրինություն | Բնակիչ-բաժանորդներ | | | Իրավաբանական | | |
|---------------|-------------------------|---------------------|-------|-------------------------|---------------------|-------|
| | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % |
| Առևտրային | 871,446 | 396,075 | 45.45 | 38,290 | 10,851 | 28.34 |

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 2967 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 568 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

| Հասցե | Ջրաչափերի ընդհանուր քանակ | Տեղադրված ջրաչափերի քանակ | % |
|----------------------------|---------------------------|---------------------------|------|
| գ.Քասախ | 2370 | 1942 | 81.9 |
| գ.Պոռչյան | 1603 | 1075 | 66.5 |
| ք.Չրազդան, միկրոշրջան թաղ. | 5905 | 1857 | 32.4 |

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10557, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 10044, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1545, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2233, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1454, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2239 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4061 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

| Տնօրինություն | Քանակ | Խ.մ. | Գումար (ՀՀ դրամ) |
|---------------|-------|--------|------------------|
| Առևտրային | 126 | 78,727 | 15,009,217 |

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի հունվար ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.4%, ինչը 0.4% ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 70 ՃԿՓ-ներ:

Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ներից մի քանիսի լուսանկարները:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2022թ-ի հունվար ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 106 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 39 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ծախսն Երևան քաղաքում ավելացել է 6 813 ԿՎտ/ժ. (1.27%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ




Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ այս տարի նոր պոմպակայանների թիվն ավելացել է 7 հատով (6183 կՎտ):

Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:


● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների էլ. էներգիայի ծախսը նվազել է 3903.21 կՎտ/ժամ 14.5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին



● Գյումրի քաղաքում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 3603 կՎտ/ժամ 10.5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 42 հասցեի էլ. հաշվիչների գույքագրում և ընթերցում: 7 ՕԿՁ-ում կատարվել է գույքագրման աշխատանք.

- Ֆանտան խ.հ.– էլ.հաշվիչի փոխարինում:
- 28 հասցեներում կատարվել է հոսանքի պարամետրերի ստուգում, պոմպակայանի զգնում, թերությունների հայտնաբերում:
- 1 հասցեում (Մերձավան շենքեր) հայտնաբերվել է 890 կՎտ հավելագրում, կազմվել է արձանագրություն:
- Պոմպակայանների հոսանքի ծախսի գրաֆիկների ուսումնասիրության արդյունքում 2 պոմպակայանում հայտնաբերված խնդիրները վերացվել են

Պոմպակայանների ուսումնասիրություն


● Թվով յոթ հասցեում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:

Ինվերտորային պոմպի տեղադրում

● Մեկ հասցեում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր՝ Մանթաշյան 51 և Երզնկա 2, 4 հասցեներում:

Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա

● Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 13,298կՎտ.ժ կամ 8,82%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 10 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


2022 թվականի հունվար ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 55 620 կՎտ/ժամ (4,77%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 49 072 կՎտ.ժ/ամիս կամ 2,28% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 97 544 կՎտ.ժ կամ 2,15 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են նոյեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

| <i>Աշխատանքի անվանում</i> | <i>Չ/Ս</i> | <i>Քանակ</i> |
|---|--------------------|--------------|
| Իջևան քաղաքի կոյուղագծերի թվայնացում | կմ | 23. 257 |
| Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը այս պահին փոփոխված տարբերակով | կմ | 1762.7 |
| Տեխնիկական պայմանների թվայնացում | հատ | 61 |
| ՊԿԱԾ-ով տրված կատարողականների թվայնացում՝ Արտաշատ-95մ, Հրազդան՝ 47+93մ | քաղաք | 2 |
| Մարզային կոյուղու երկարությունն այս պահին փոփոխված տարբերակով | կմ | 1474.89 |
| Համայնքների և դրանց կից ջրատարների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում | համայնք | 35 |
| Երևան քաղաքի տարբեր համայնքների ջրագծերի թարմացումներ | քաղաք | 1 |
| Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում | գյուղեր և քաղաքներ | 83 |
| Սարուխանի պոմպակայանում ռիսկերի և վթարային հավանականությունների գնահատում | պոմպակայան | 1 |
| Իրավաբանական բաժանորդների կետերի ուղղում | կետեր | 794 |
| Ֆիզիկական բաժանորդների կետերի ուղղում | կետեր | 796 |
| Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում | կետեր | 219 |
| Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում | կետեր | 39 |
| Կալերի պոմպակայանում ռիսկերի և վթարային հավանականությունների գնահատում | պոմպակայան | 1 |
| Երևան քաղաքի ԱՏՀ-ում առկա ջրագրկվող գոտիների տեքստային տարբերակների նախապատրաստում | քաղաք | 1 |
| ԱՏՀ տվյալների փոխանակման և տվյալների բազայի կառավարման վերաբերյալ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակում | մշակում | 1 |
| Կատարվում է ՕԿՁ-ների տեղադիրքերի և սխեմաների վերաբերյալ ԱՏՀ տվյալների բազայի ստեղծում՝ ըստ տրամադրված գույքի վարձակալման վկայականների: Մեկնարկել ենք Երևանի ՕԿՁ-ից: | քաղաք Երևան | 1 |

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Գառնի-Երևան ջրատար

Նուբարաշեն-Արին-Բերդ ՕԿՋ միջանկյալ հատվածում առաջացել էր վթար 130լ/վ ծավալով: Այն վերացվել է ՇՏ-ի ուժերով:



Արարատյան ջրատար

Ճնշումային փորձարկման ընթացքում ջրատարի տվյալ հատվածի վրա առաջացել էր վթար: Վթարավերականգնողական աշխատանքների ժամանակ պարզվել է, որ ջրատարը գտնվում է անմխիթար վիճակում: Որոշում է կայացվել ջրատարի տվյալ հատվածը փոխարինել հարևանությամբ տեղակայված չգործող ջրատարով: Սակայն նախ անհրաժեշտ էր այդ չգործող ջրատարի տվյալ հատվածը փորձարկել, ապա միայն այն միացնել գործող ջրատարին: Այդ նպատակով նախ խցափակվել են չգործող ջրատարի երկու ծայրերը, ապա կատարվել է ճնշումային փորձարկում:



Կատարված աշխատանքները տվել են գերազանց արդյունք. ճնշումը հասցվել է 11.33 բարի (աշխատանքային ճնշում):

Արզական-Խարբերդ ջրատար

Ջրատարի վրա վթարվել է չգործող, խցափակված միացումը, որի համար կազմակերպվել է ջրատարի տվյալ հատվածի կանգառ: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է ≈ 20 լ/վ ջրաքանակ:



«Արտամետի» պոմպակայան

Էներգավերահսկողության բաժնի կողմից ստանալով ահազանգ «Արտամետ» պ/կ-ի գերծախսի վերաբերյալ վերոնշյալ պ/կ-ից դեպի Արտամետ գյուղը ընկած հատվածում իրականացվել է ուսումնասիրություն: Արդյունքում հայտնաբերվել է երկու վթար գումարային Յ/վ հոսակորուստով: Դրանք վերացվել են տեղամասի կողմից: Նվազել է պոմպի արտադրողականությունը և տնտեսվել է էլ. էներգիա:



Ծարավաղբյուր-Չորաղբյուր ջրատար

Ջրատարի հերթական շրջացի ժամանակ հայտնաբերվել է վթար 2լ/վ արտահոսքով դեպի «Ծիծեռնակաբերդ» ՕԿՋ բարձրացող հատվածում: Վթարը վերացվել է բաժնի կողմից:



Ընթացիկ ամսում կատարվել են շրջայցեր տարբեր ջրատարների վրա, որոնց ընթացքում հայտնաբերվել են մանր վթարներ: Այդ մասին տեղեկացվել է շահագործման տեղամասերին:

Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

● «Շիրակ» տեղամասի և Գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից ուսումնասիրության է ենթարկվել Գյումրի քաղաքի Սավոյան 226 տնակային տարածքում վթարված $D=50$ մ պողպատե ջրագիծը, որի պատճառով ամբողջ ջուրը ողողել էր հարակից տարածքները: Քանի որ տվյալ տարածքում տնակները ապամոնտաժված էին և ջրագծից օգտվողներ չկան, ուստի որոշվել է այն խցափակել միացման կետում: Միացման կետում հայտնաբերված հողի տակ կորած դիտահորը խցափակման եղանակով շահագործումից հանվել է $D=50$ մ $L=220$ մ պողպատե ջրագիծ: Տնտեսվել է մոտ 1-2 լ/վ ջրաքանակ:



Գյուղ Ամասիա

● «Շիրակ» տեղամասի աշխատակիցների հետ բազմաթիվ հեռախոսային բողոքներ են ուսումնասիրվել՝ կապված ջրի ցածր ճնշման հետ, հատկապես Ամասիա գյուղում: Գյումրի քաղաքի մի շարք թաղամասերում և հարակից գյուղական բնակավայրերում իրականացված լայնածավալ վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Ղազանչի 1 ջրատարի հավանական վթարը հայտնաբերելու համար անհրաժեշտություն առաջացավ ստուգայց կատարելու Ախուրյանի կիրճ կոչվող տարածքում, որը ձմռան այս ժամանակահատվածում ծածկված է ձյան գրեթե 1-1,5 մետրանոց շերտով: Չյունագնացի միջոցով իջնելով տվյալ տարածք՝ հայտնաբերվել է վթարը, որն ըստ չափումների տարբերության՝ կազմում էր 22լ/վ: Հետագա վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ կիրառվել է ծանր թրթուրավոր տրակտոր, որը ճանապարհի բացելով հնարավորություն ստեղծեց Շիրակ տեղամասի մեքենամեխանիկոսներին մոտենալու վթարի վայր և սեղմ ժամկետում վերացնելու վթարը: Վթարը վերացնելուց հետո Ղազանչի 1 $D=600$ մ պողպատե ջրագծի $Q=22$ լ/վ հոսակորուստը վերացվել է:




● Սևան քաղաքի Շինարարներ փողոցում կատարած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 200մ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է $Q=4$ լ/վ ջրաքանակով վթար:

● Սևան քաղաքում՝ Աբովյան փողոցի մոտակայքում գտնվող $D=200$ մ պողպատե ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար, որը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 6$ լ/վ ջրաքանակ:




● «Ծաղկաձոր» տեղամասի «Ուլաշիկ» ջրագծի վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 200մ պողպատե ջրագծի վրա հայտնաբերվել են 2 վթար ընդհանուր 20լ/վ ջրաքանակով:



● Վեղի քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Կապան փողոցով անցնող D=150մ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 7լ/վ:


Քաղաք Երևան

● Արարատյան 2-րդ ջրատարի վրա իրականացված գոտիավորման աշխատանքների արդյունքում Նորագավիթ 14-րդ և 10-րդ փողոցների հարևանությամբ հայտնաբերվել է D = 50մ անհայտ և վթարված ջրագիծ: Շահագործումից հանվել է D= 0մ, L=500մ ջրագիծ և արդյունքում տնտեսվել է Q = 10լ/վ ջրաքանակ:



● Հյուսիս տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Բագրևանդի փողոցով անցնող ջրագծի վրա: Փոխարինվել է L=30 մ, D=50մ պողպատե քայքայված ջրագիծը D=63մ ՊԷ ջրագծով: Արդյունքում տնտեսվել է Q=3լ/վ:

● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Պռոշյան գյուղ, Մայիսյան փողոց 31/2 տան դիմացով անցնող D = 100մ թուջե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q = 5լ/վ ջրաքանակ:



● Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Բաշինջաղյան 159 շենքի դիմացով անցնող D=150մ պողպատե ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է Q=5լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Քաղաք Ապարան. Ապարան ք/կ-ում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգի խափանված Alldos փականների փոխարինում նորով:



Գյուղ Բազմաղբյուր. Բազմաղբյուր ք/կ-ում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար իրականացվել է հեղուկ քլորի համակարգի վակուում կարգավորիչի վերանորոգում և խափանված պոմպի փոխարինում:

Քաղաք Իջևանի Գետափնյա ք/կ-ում հիպոքլորիդի հաբի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է ֆասաված քլորի խողովակի նորոգում և հիպոքլորիդի հաբի շարքից դուրս եկած Esiflo սարքավորման տակառի փոխարինում:



Քաղաք Վանաձորի Լեռնապատ ք/կ-ում իրականացվել է հեղուկ քլորի կոնտեյնների հենակի տրամադրում և բալոններից անցում կոնտեյնների: Արդյունքում Կամազ մակնիշի քլոր տեղափոխող մեքենան մեկ ամսվա փոխարեն տեղափոխում կիրականացնի երեք ամիսը մեկ անգամ, ինչի արդյունքում երեք անգամ ավել վառելիք կոնտեսվի:

Քաղաք Գյումրի Կապա ք/կ-ում հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է հեղուկ քլորի համակարգի հնամաշ, շարքից դուրս եկած վակուում կարգավորիչի փոխարինում նորով:




Քաղաք Չարենցավանի Ֆանտան ք/կ-ում սարքավորման անխափան աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է քլորակայանի քլորագծերի մեկուսացում (իզոլացիա):

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 29339 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 9353 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 7321 զանգ՝ 78.3%, իսկ մարզերի ցուցանիշը՝ 2032 զանգ (21.7%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 19986 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 13356 զանգ (66.8%), իսկ մարզերինը՝ 6630 զանգ (33.2%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

| | | Ստորաբաժանում | | |
|--------------------|----------------------------|----------------------|----------------|----------------|
| | | 2021 | 2022 | |
| | | հունվար | հունվար | |
| Առևտրային | Ընդամենը | 11672 | 9353 | -19.87% |
| | Երևան | 9063 | 7321 | -19.22% |
| | Մարզեր | 2609 | 2032 | -22.12% |
| | Շահագործում | 22875 | 19986 | -12.63% |
| Շահագործում | Հարավ | 10287 | 9483 | -7.81% |
| | Շենգավիթ | 2218 | 2165 | -2.39% |
| | Կենտրոն | 1942 | 1682 | -13.34% |
| | Հյուսիս/Ավան Նոր Նորք/ | 1287 | 1054 | -18.10% |
| | Էրեբունի | 2083 | 1299 | -37.64% |
| | Պումպեր | 487 | 387 | -20.53% |
| | Մարզեր | 2270 | 2896 | 27.58% |
| | այդ թվում կոյուղու վթար | 42 | 42 | 0.00% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 3458 | 3109 | -10.09% |
| | Հյուսիս | 12588 | 10503 | -16.57% |
| | Արաբկիր | 2011 | 2017 | 0.35% |
| | Քանաքեռ-Զեյթուն | 1148 | 986 | -14.20% |
| | Մաշտոց | 2245 | 1665 | -25.84% |
| | Շահումյան | 2286 | 1485 | -35.04% |
| | Պումպեր | 912 | 615 | -32.57% |
| | Մարզեր | 3986 | 3735 | -6.32% |
| | այդ թվում կոյուղու վթար | 66 | 70 | 6.06% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 5121 | 4468 | -12.75% |
| | Ընդամենը | 34547 | 29339 | -15.08% |



- 2021թ. հունվարի համեմատ՝ 2022թ. հունվար ամսին 19.87 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը նվազել է 12.63 %-ով:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ընթացիկ տարվա առաջին ամիսը նախապատրաստական էր ընկերության շատ ծառայությունների համար: Կազմվում էին ծրագրեր և ձեռնարկվում էին միջոցներ 2022թ-ին նախատեսված աշխատանքները ողջ ծավալով իրականացնելու համար: Դրանով պայմանավորված, զգալիորեն ավելացավ մասնավորապես ապրանքների և ծառայությունների գնումների վերաբերյալ հայտարարությունների քանակը, որոնք հրապարակվեցին Veolia.am պաշտոնական կայքում և facebook.com/veolia.armenia ֆեյսբուքյան էջում:

Համակարգի ամենօրյա կանոնավոր գործունեության ապահովումը հունվարին եղել է ընկերության շահագործման և տեխնիկական տնօրինությունների գլխավոր խնդիրը, որը շարունակաբար լուսաբանվել է Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ կողմից: Իսկ դրա կարիքը կար նաև ցուրտ եղանակային պայմանների պատճառով, որոնք լրացուցիչ դժվարություններ էին ստեղծել ՎեոլիաԹիմի համար:

Մասնավորապես, Սյունիքի մարզի Բոնակոթ գյուղի ջրամատակարարման ապահովման համար ՎեոլիաԹիմը ստիպված է եղել ձյունապատ տեղանքով, ռազմական թրթուրավոր ամենագնացի օգնությամբ մեկնել 15 կմ հեռու գտնվող աղբյուր և վերանորոգել ջրթափ փականը: Ապարանում սառել էր տեղի ջրաղբյուրի թիվ 1 խորքային պոմպից մինչև Ապարան-Երևան մայրուղային ջրատար ձգվող խողովակաշարի 30 մետրանոց մի հատված: Այն վերագործարկելու համար ջրմուղագործները ստիպված էին քայլել 4 կմ-ից ավելի տրանսպորտի համար անանցանելի ձնառատ սարերով, իրենց հետ տեղափոխելով անվաղողեր, գազաբալոն ու պահանջվող այլ սարքավորումներ՝ խողովակը տաքացնելու ու պոմպը միացնելու համար:

ամեն օր Վանաձորի, Դիլիջանի, Բերդի, Մեղրիի, Կապանի Ջրի մաքրման կայանների աշխատակիցները սարեր են բարձրացել (հաճախ ոտքով), գետային ջրընդունիչները կուտակվող սառույցից, ինչպես նաև ձյուն-տերևներից մաքրելու և ջրի կայուն հոսքն ապահովելու համար:



Հաշվետու ամսին գրեթե



Մինևույն ժամանակ, եղանակային քիչ թե շատ հարմար պահերին հիմնականում ՀՀ հարթավայրային գոտում ու նախալեռնային շրջաններում շարունակվել են իրականացվել որոշակի ջրաշինարարական աշխատանքներ:

Դրանցից առավել նշանակալիցը եղել է «Գառնի-Երևան» մայրուղային ջրատարից Արարատի մարզի Ջրաշեն և Դիտակ գյուղերը սնող նոր 900 մետրանոց պոլիէթիլենային ջրագծի կառուցումը: Նախկինում տվյալ խնդիրը լուծվում էր տարբեր տրամագծեր ունեցող թվով 5 մետաղյա ջրագծերի միջոցով, որոնք արդեն ամբողջությամբ քայքայված էին, նաև անցնում էին մասնավոր այգիների տարածքով, որտեղ վթարները, սպորինություններն ու վայրկյանում մոտ 5 լիտր ջրի կորուստն անխուսափելի էին: Բնականաբար, նման պայմաններում հնարավոր չէր նշված գյուղերն ապահովել կայուն ջրամատակարարմամբ: Այստեղից էլ խնդիրը, որը հաջողությամբ լուծվեց:

Հաջորդը Արագածոտնի մարզի Ղազարավան կոչվող ջրաղբյուրից դեպի Աշտարակի ու Էջմիածնի տարածաշրջանների բնակավայրեր ձգվող խողովակաշարի կառուցման ավարտն է: Այստեղ էլ վթարված մետաղական ջրագիծը փոխարինվեց 700 մետրանոց պոլիէթիլենայինով: Այն ավելի մեծ ճնշման է դիմանում, հետևաբար դրանով հնարավոր է ավելի շատ ջուր մատակարարել սպառողներին: Արդյունքում «Ագարակ» պոմպակայան մուտք գործող ջրաքանակն ավելացավ, ճնշումն էլ բարձրացավ, ինչը հնարավորություն տվեց նաև պոմպերն աշխատեցնել ավելի խնայողական ռեժիմով ու տնտեսել էլեկտրաէներգիա:

Նման աշխատանքների շարքին կարելի է դասել նաև Վայոց Ձորի Մալիշկա գյուղի ինքնահոս ջրամատակարարում ունեցող որոշ թաղամասերի շուրջօրյա ջրամատակարարման խնդրի լուծումը: Գյուղի սարերում գտնվող աղբյուրում կատարված աշխատանքների շնորհիվ նախկինում «փախչող ջրերը» վայրկյանում 6-7 լիտր քանակով, հաջողվեց հավաքել և ինքնահոս խողովակաշարով հասցնել գյուղի օրվա կարգավորիչ ջրամբար:



ՎեոլիաԹիմում բարոյահոգեբանական բարձր մակարդակ ապահովելու և արդյունավետ աշխատանքային մթնոլորտ ձևավորելու նպատակով հունվարի 28-ին նշվեց Հայոց բանակի օրը: Իսկ Վեոլիա Ջուր ՓԲԸ դերն ու նշանակությունը հանրապետության տնտեսության մեջ ցույց տալու համար հրապարակվեց հաղորդագրություն այն մասին, որ 2021թ. տվյալներով ընկերությունը հանդիսացել է ՀՀ թիվ 36 հարկատուն հարկերի և վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե վճարված 4,802,845,000 դրամ գումարով:

Covid 19-ի հերթական ալիքի հետ կապված Բաժանորդների սպասարկման գրասենյակների աշխատանքում մտցված սահմանափակումների մասին նույնպես ժամանակին տեղյակ է պահվել սպառողներին:

Բնականաբար, հունվարին հանրությանն է ներկայացվել նաև բոլոր խոշոր ջրանջատումների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները: Մշտապես թարմացվել է Veolia.am կայքը, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերը:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● Հաշվետու ամսում Բաժինը մշակել և Ընկերության ղեկավարության համաձայնեցմանն է ներկայացրել Ընկերության Արտադրական վտանգավոր օբյեկտների 2022 թվականի ընթացքում նախատեսվող տեխնանվտանգության փորձաքննության աշխատանքների տեխնիկական մասնագրերը:

● Բաժինը մշակել է անմիջականորեն ջրի մաքրման, վարակազերծման և ցանցի սպասարկման հետ առնչվող Ջրնուղների կառույցների աշխատողների, ինչպես նաև արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի փաստակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների համար 2022 թվականին նախատեսվող բժշկական հետազոտությունների և զննության տեխնիկական մասնագրերը:

● Հաշվետու ամսում մշակվել է «Կաթսայական տեղակայանքի սարքվածքի զննման և սարքին վիճակի պատասխանատու անձի» մասնագիտական որակավորման դասընթացի պրեզենտացիայի նյութը և դասընթացի ավարտին մասնակիցների կողմից լրացվելիք գիտելիքների ստուգման հարցաշարը:

● ՈԱԱ բաժինը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներով, մշակեց Ընկերության թվով 1 ամբարձիչ ավտոմեքենայի տեխնիկական անվտանգության վկայագիր:

● Մշակվել է Բաժնի գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ անկախ տեխնիկական աուդիտորին ներկայացնելու համար:

● Մշակվել և Ընկերության տնօրինությանն է ներկայացվել ՈԱԱ բաժնի 2021 թվականի գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:


5.2. ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ/ՄԵՄԻՆԱԼՆԵՐ

● Բաժինը, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներով, Ընկերության «Երևան» Շահագործման տնօրինության «Հարավ» Շահագործման տեղամասի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավված թվով 15 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Աշխատանքներ բարձրության վրա» Վեոլիա Գրուպի բարձր ռիսկերի կառավարման ստանդարտ և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմաներով առկա դասընթացները:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, զրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարը կրեցին դիմակներ:

2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՄԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.3. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 15 քլորակայանում, 9 պոմպակայանում 1 ՕԿՁ-ում և 2 վարչական շենքում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության թվով 6 ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:



2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1 ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունվար ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Ակտեր Բնտերակտիվ համակարգի միջոցով ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում են հունվար ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

| Խախտման արձանագրություն | | | |
|-------------------------|------------|-------------|-------------|
| Տեղամաս | Ընդամենը | | |
| | քանակ | հազ. խ/մ | մլն. դրամ |
| Յրուսիս | 2 | 0.4 | 0.1 |
| Էրեբունի | 4 | 3.1 | 0.6 |
| Շենգավիթ | 2 | 0.8 | 0.1 |
| Կենտրոն | 7 | 9.4 | 1.7 |
| Արաբկիր | 4 | 1.0 | 0.2 |
| Մաշտոց | 2 | 0.4 | 0.1 |
| Շահումյան | 4 | 1.5 | 0.2 |
| Եղվարդ | 1 | 0.3 | 0.1 |
| Քանաքեռ-Զեյթուն | 1 | 0.9 | 0.1 |
| ԱՎԲ | 41 | 22.8 | 4.2 |
| Լոռի | 2 | 1.0 | 0.2 |
| Շիրակ | 13 | 4.3 | 0.7 |
| Արթիկ | 2 | 0.8 | 0.1 |
| Արարատ | 6 | 1.2 | 0.2 |
| Աբովյան | 21 | 14.7 | 2.4 |
| Յրազդան | 4 | 1.3 | 0.2 |
| Արտաշատ | 7 | 1.0 | 0.2 |
| Բերդ | 1 | 0.7 | 0.1 |
| Գավառ | 8 | 3.1 | 0.5 |
| Դիլիջան | 3 | 1.9 | 0.3 |
| Էջմիածին | 3 | 1.5 | 0.2 |
| Թալին | 2 | 0.5 | 0.1 |
| Իջևան | 4 | 0.5 | 0.1 |
| Կապան | 1 | 0.3 | 0.1 |
| Մասիս | 4 | 2.1 | 0.3 |
| Նոյեմբերյան | 3 | 1.5 | 0.2 |
| Արմավիր | 1 | 0.1 | 0.0 |
| Աշտարակ | 1 | 0.2 | 0.0 |
| Զարենցավան | 3 | 1.7 | 0.3 |
| Սիսիան | 10 | 5.7 | 1.1 |
| Ստեփանավան | 1 | 0.5 | 0.1 |
| Ընդամենը | 168 | 85.0 | 14.8 |

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում են հունվար ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

| Լաբորատորիա | | | | |
|-----------------|---------------|---------------|---------------|--------------|
| Տեղամաս | Միջամտություն | | Անսարքություն | |
| | քանակ | հազ. խ/մ | քանակ | հազ. խ/մ |
| Յրուսիս | 11 | 2.87 | 20 | 0.18 |
| Էրեբունի | 14 | 9.18 | 53 | 0.40 |
| Շենգավիթ | 10 | 3.83 | 53 | 0.45 |
| Կենտրոն | 10 | 4.53 | 58 | 1.48 |
| Արաբկիր | 1 | 1.55 | 6 | 0.02 |
| Մաշտոց | 23 | 8.74 | 67 | 0.52 |
| Շահումյան | 28 | 6.63 | 82 | 12.25 |
| Եղվարդ | | - | 7 | 0.02 |
| Քանաքեռ-Զեյթուն | 16 | 3.30 | 144 | 0.73 |
| Լոռի | 17 | 2.07 | 37 | 0.23 |
| Շիրակ | 27 | 14.52 | 61 | 0.45 |
| Արթիկ | 13 | 5.67 | 10 | 3.18 |
| Արարատ | 4 | 0.47 | 38 | 1.28 |
| Աբովյան | 20 | 4.49 | 39 | 0.47 |
| Յրազդան | 5 | 1.05 | 18 | 0.21 |
| Ալավերդի | 1 | 0.08 | 36 | 0.51 |
| Աշոցք | 7 | 3.14 | 13 | 0.10 |
| Ապարան | | - | 4 | 0.03 |
| Արտաշատ | 1 | 0.26 | 2 | 0.01 |
| Բերդ | 1 | 0.10 | | - |
| Գավառ | 5 | 1.80 | 14 | 0.10 |
| Գորիս | 1 | 0.52 | 4 | 0.02 |
| Դիլիջան | 3 | 1.56 | 5 | 0.02 |
| Եղեգնաձոր | 3 | 1.29 | 13 | 0.07 |
| Էջմիածին | 3 | 0.73 | 10 | 0.03 |
| Թալին | 1 | 16.12 | 1 | 0.00 |
| Իջևան | 5 | 1.12 | 5 | 0.01 |
| Կապան | 3 | 0.77 | 8 | 0.06 |
| Մասիս | 14 | 6.75 | 27 | 0.15 |
| Մարտունի | | - | 1 | 0.01 |
| Մեղրի | 6 | 2.06 | 28 | 0.56 |
| Նոյեմբերյան | 2 | 0.77 | 16 | 0.05 |
| Արմավիր | 10 | 4.00 | 24 | 0.11 |
| Ջերմուկ | 2 | 0.52 | | - |
| Սևան | 1 | 0.17 | 5 | 0.03 |
| Վայք | | - | 6 | 7.25 |
| Վարդենիս | | - | 1 | 0.03 |
| Աշտարակ | 4 | 1.02 | 9 | 0.07 |
| Զարենցավան | 5 | 1.42 | 14 | 0.08 |
| Սիսիան | 1 | 0.26 | 5 | 0.03 |
| Սպիտակ | 4 | 0.45 | 1 | 0.00 |
| Ստեփանավան | 9 | 7.79 | 8 | 0.02 |
| Տաշիր | | - | 3 | 0.03 |
| Ընդամենը | 291 | 121.57 | 956 | 31.26 |



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Սարգսի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am